№ 217 Նոյեմբերի 21 (Դեկտեմբերի 3) 1881 Նոյեմբերի 21 (Դեկտեմբերի 3) № 217

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են մէջիայն խմբագրատան մէջ։

առաքողությունը պիտի ուղղվի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից)

Գոյատարաստիւն ընդունվում է ամեն յեղուով։

Գոյատարաստիւնների համար վճարում են
Երրորդանիստը բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ"Ի

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։

ԳՐՈՂԻԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԱԳԻՆԸ. 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Երեք կայսերութիւնների քաղաքականութիւնը։ Գերմանիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 17 Նոյեմբերի

Փոքր ինչ ժամանակ սրանից առաջ ինձ պատահեց Գանձակ գտնվել և մի քանի անձանց հետ խօսել Փարիզի Հայկազեան-Ուսումնասիրաց ընկերութեան մասին։ Այդ պարոններից ոմանք մեծ համարմունք ցոյց տուին վերոյիշեալ ընկերութեան նպատակին և բաղձանք յայտնեցին մասնակցել նրան. ուստի պարտք եմ համարում պատուական թերթիդ միջոցաւ յայտնել թէ այդ պարոնների ազգանունները և թէ նրանց տուած գումարը ի գիտութիւն մերայնոց։ Նրանք են. պ. Ներսէս Տէր-Ներսէսեան չորս տարվայ վճարք 30 ր., պ. Ալէքսանդր Խտահակեան մի տարվայ վճարք 7 ր. 50 կ., պ. Մարտիրոս Նաքաթեան մի տարվայ վճարք 7 ր. 50 ր., և պ. Նիկողայոս Մէլիքեան միանուագ նուէր 10 ր.։

Ընդամենը ստացած եմ 55 ր., որը և անմիջապէս յանձնած եմ պ. Եփրէմ Ցատուրեանցին, որը Փարիզի ընկերութեան գործակատար է Թիֆլիսում։

Ցաւալով, որ չէք մերժի խոնարհ խնդիրքս տեղի տալ ազգօգուտ «Մշակիդ» մէջ այս երկտողին՝ նախապէս կը մատուցանեմ ձեզ, պ. խմբագիր, իմ խորին շնորհակալութիւնը։

Բժ. Կ. Մէլիք-Բէգլարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է հետևեալը։ Միջազգային հեռագրական ընկերութիւնից ստացված և մեր լրագրի մէջ տպված հեռագրի առիթով, մեզ հասատատ աղբիւրներից յայտնի է, որ, աչքի առաջ ունենալով Բաթումի նահանգի հարևան թիւրքաց սահմաններում ժանտախտի նշաններ ունեցող մի ինչ որ հիւանդութեան մասին տարածված անհանգստացնող լուրերը, Բաթումի նահանգի գլխաւորը միջոցներ է գործ դրել, նահանգի ցամաքային սահմանի վրա ամեն տեսակ հաղորդակցութիւնը փակելով, և մի և նոյն ժամանակ բրանդ-վախտի իրաւունքներով մէկ չկուներ հրամայված է Թիւրքիայից դէպի մեր ափերը եկող նաւերի մանրամասն խուզարկութիւն անել։ Ինչպէս հաղորդում է Տրապիզոնի ռուսաց հիւպատոսը մարտի 14-ից, Տրապիզոնի գլխաւոր նահանգապետը (վալի) հաստատում է, որ Լազիստանում տարածված հիւանդութիւնը չափազանցացրած է և բոլորովին փոխադրական չէ, իսկ Էրզրումի ռուսաց հիւպատոսը նոյեմբերի 15-ից հեռագրում է, որ Էրզրումի բոլոր բժշկական շրջաններում հասարակական առողջութիւնը կատարելապէս բաւականացուցիչ է, և որ տեղական վալին Միջազգային ընկերութեան վերոյիշեալ հեռագրի առիթով հեռագրական կարգադրութիւն արաւ ստուգելու Միջազգային ընկերութեան այդ տեղեկութիւնը, որի մասին անյապաղ կը հաղորդվի Կովկասեան բարձր կառավարութեանը։ Վերջինս, բացի դրանից, արդէն յարաբերութիւններ է սկսել Կ. Պոլսի մեր դեսպանի, Նելիդովի հետ, Թիւրքիայի մեր հարեան նահանգների մէջ տարածված հիւանդութեան բնաւորութիւնը վերջնականապէս պարզելու համար։

—

«Մշակի» ներկայ համարում տպում ենք բժիշկ Մէլիք-Բէգլարեանցի նամակը Փարիզի Հայկազեան ընկերութեան համար հաւաքած փողերի մասին։ Այդ նամակը տպելով մենք բացառութիւն ենք անում մեր բարեկամ բժիշկ Մէլիք-Բէգլարեանցի համար, եթէ ոչ մենք երբէք չենք տպում այն ցուցակները նուիրատու անձանց, որոնք մեր խմբագրութեանը չեն յանձնում փողերը, որովհետև այսպիսով մեր լրագրի էջերի մէջ նուիրատուների ցուցակների պատճառով այլ ևս տեղ չէր լինի ուրիշ որ և է յօդուածների համար։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են։ «Նոր ընտրված տանուտէր պ. Գեղամեանցը սկզբում մեծ մեծ խոստումներով շլացրեց ժողովրդին, մինչև իր տեղը ստացաւ։ Նա խոստացաւ փողոցները մաքուր պահել, գիշերները լուսաւորել և ուրիշ շատ բաներ։ Լուսաւորութեան համար լապտերներ տնկվեցան, բայց ոչ ոք նրանց մէջ լոյս չէ տեսել։ Ցեխոտ փողոցներում անկարելի է մտնել գալ, մանաւանդ հրապարակի վրա լճացած ջրի մէջ նաւակներ կարելի է մտնել։ Հացագործները այնքան անպիտանացրել են հացը, որ անկարելի է ուտել, չը նայելով որ ցորենը այժմ շատ էժան է։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ գրում են մեզ։ «Ճեմարանի վարժապետ պ. բժիշկ Տէր-Գրիգորեանցը միշտ բեվօլվերով է մտնում դասատուն, յայտնի չէ թէ ինչ նպատակով։ Քանի մի անգամ բժշկին նկատել են այդ տարօրինակ վարմունքի մասին այն ևս պ. բեկտորի ներկայութեամբ, իսկ վերջինս, զուարճութեան տալով, անց է կացրել անկարգութիւնը։»

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են մեզ։ «Արդէն երրորդ անգամն է, որ բարձր հոգևոր կառավարութիւնը հրամանագրել է տեղային պ. գանձապետին, որ տէր Մովսէս քահանային Ազուլիսից հեռացնէ, բայց պ. գանձապետը ուշադրութիւն չէ դարձնում և չէ գործադրում հրամանը։ Ի հարկէ, պարոնը իր առանձին նպատակներն ունի, բայց մինչև երբ պէտք է դէպի չարը գործ դնել ժողովրդի համբերութիւնը։»

—

Մեզ գրում են Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ։ «Հոկտեմբերի 22-ին կատարվեցաւ տեղային օրիորդաց դպրոցի 14 տարվայ տարեդարձը. ժողովուրդը լիքն էր դահլիճում, այնպէս որ կանգնելու տեղ չը կար։ Օրիորդներին նոյնպէս այնտեղ էին կանգնեցրած, թէև նրանց համար առանձին տեղ էր որոշված։ Հանդէսը շքեղ էր, բայց անկարգ։ Հոգաբարձուները, ինչպէս միշտ սովորութիւն ունեն, այս անգամ ևս հաշիւ չը ներկայացրին հասարակութեանը։ Երևանի պ. Նահանգապետը այդ օրը շնորհ բերեց դպրոցը և գոհ մնաց դպրոցից։»

—

Լրագիրներում կարդում ենք որ վ. Օլգա գեռը ԱՍՏՐԱԽԱՆԻ մօտ, Նոյեմբերի 10-ին ծածկվել է սառուցով։ Շոգենաւերի երթևեկութիւնը դադարեցրած է։

—

«Московск. Вѣд.» լրագիրը հրատարակեց մի երկար առաջնորդող յօդուած, որի մէջ զարմացմամբ կարդայինք հետևեալ մտքերը։ Լրագիրը ասում է որ Ռուսաստանի պէս մի անգին պետութիւն չէ կարելի կառավարել կենտրոնից ամեն տեղ ուղարկելով պաշտօնեաներին։ Բայց ինչպէս պէտք է կառավարել,—այդ որոշ կերպով չէ ասում Մոսկվայի թերթը։ Մի և նոյն յօդուածում պ. Կատկովի լրագիրը ասում է որ պէտք է ապահովացնել ռուս հասարակութեան հասարակային և անհատական ազատութիւնը։ Այս կէտն էլ թերթը չէ պարզում։

—

Թիֆլիսում հրատարակվող «Юридическое Обозрѣніе» շաբաթագրի մէջ կարդում ենք որ անձնասպան օրիորդ Սոֆիա Շատկովսկու հայրը, որ ծառայութիւնից հրաժարական տուած մայոր է, փաստաբան Եակուբովի ձեռքով գանգատ է ներկայացրել դատարանին այն երիտասարդի դէմ, որ գայթակղեցրեց իր աղջկան և պատճառ դարձաւ նրա անձնասպանութեան։

—

Մեր թղթակիցը Հաւլաբար թաղից մեզ գրում է հետևեալը։ «Շատ անգամ դարձրել ենք քաղաքային վարչութեան ուշադրութիւնը Հաւլաբարի փողոցների անմխիթար դրութեան վրա։ Այդ փողոցները քարած չեն, չեն մաքրվում և բացի այդ այնպէս փոսեր ունեն, որ կառքերը անդադար շուռ են գալիս ու ընկնում փոսերի մէջ։ Ամենափոքր անձրևից անտանելի ցեխ է գոյանում, որ շատ է դժուարացնում մանուկների դպրոց երթալը։ «Մշակի» այդ լուրերը ունեցան իրանց ներգործութիւնը. քաղաքային վարչութիւնը կարգադրել է այժմ հարթել Հաւլաբարի բոլոր քուչաները և խճուղի դարձնել նրանց։ Բանուորները արդէն աշխատում են։ Ցիրաւի, 57.000 ռուբլ գումարը որ նշանակված է Թիֆլիսի փողոցների մաքրութեան և միրանորոգութեան համար, մի այնպիսի մեծ գումար է, որով կարելի է Թիֆլիսի բոլոր փողոցները հեշտահաճ բարեկարգել, եթէ աչքի առաջ ունենանք և այն հանգամանքը, որ քուչաների վրա գործ դրվող խիճը, քարերը և աւազը՝ բոլորն էլ ձրի է ստանում քաղաքը։ Պէտք է այն էլ ասել որ շատ անգամ կապալառուները ի չարն են գործ դնում իրանց իրաւունքները, կանոնաւոր կերպով չը կատարելով իրանց յանձն առած պարտաւորութիւնները։»

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում է Լազարեան ճեմարանի ուսանողներից մէկը։ «Ընթերցողներին յայտնի է որ այստեղ կազմված է մի մասնաժողով որ պէտք է պատրաստէ ճեմարանի համար հայոց լեզուի և հայոց պատմութեան ծրագիր, բայց զարմանալի է որ այս անգամ էլ դարձեալ մոռացութեան են տալիս Հայաստանի աշխարհագրութիւնը, որ իսկապէս ամենագլխաւոր առարկաներից մէկը պէտք է լինէր ճեմարանում։»

—

Թիւրքաց Հայաստանից եկողները մեզ պատմում են որ Դիարբէքիրի վիլայէթի հայերը շատ թշուառ վիճակի մէջ են շնորհով տեղական վալիի բռնութեան և մոլեռանդութեան։ Նա ամեն կերպ ճնշում և հարստահարում է հայ տարրը։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Այստեղի գլխաւոր մթերքները բաւական էժան են։ Հացի ֆունտը առաջին տեսակի արժէ 3 կոպէկ, երկրորդ տեսակի 2 կոպէկ, բրինձը ֆունտը 6 կոպէկ, պանիրը 7 կոպէկ։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Վերջապէս կաշու գործարանը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնում և իր գարշելի հոտով ապականում էր ամբողջ քաղաքի օդը, հեռացրած է քաղաքից, վարչութեան կարգադրութեամբ։ Բայց լսում ենք որ գործարանի տէրերը բողոքով դիմել են բարձր իշխանութեանը այդ կարգադրութեան պատճառով։ Յոյս ունենք որ իշխանութիւնը, ի նկատի առնելով քաղաքի առողջապահական կողմը կը մերժէ այդ բողոքը։»

—

Վարդաշէն գիւղից մեզ հաղորդում են որ այդ տեղի լուսաւորչական և յունադաւան ուսուցիչների մէջ դարձեալ ծագել է երկպառակութիւն։ Բայց այս անգամ յոյս կայ որ երկպառակութիւնը շուտ կը վերջանայ և վատ հետևանքներ չի ունենայ, որովհետև կուսակցութիւններից ոչ մինը չունի պարագլուխներ։

—

Գ. Լայայեան խնդրում է մեզ յայտնել որ վաղուց արդէն մամուլի տակ է և շատ շուտով լոյս կը տեսնի Ժորժ-Սանդի «Վարդագոյն ամպ» մանկական վէպը։

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են։ Արդէն ինն ամիս անցնում է, բայց տակաւին ոչ մի անգամ երեսփոխանական ժողով չէ կայացել մեր դպրոցների դրութիւնը քննելու համար։ Ասում են, որ դրա պատճառը հոգաբարձութիւնն է, որ չէ կամենում ենթարկվել ոչ ոքի կօնտրոլի, այլ ցանկանում է ինքնակամ գործել։

—

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ, որ գիւղական երկսեռ դպրոցները բաւական յառաջադիմութիւն են գործում. հոգաբարձուները և վարժապետները բարեխղճութեամբ են կատարում իրանց պարտաւորութիւնները։ Ճեմարանի լսարանի աշակերտները այդ դպրոցներում տալիս են փորձնական դասեր։

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ պ. Ալէքսանդր Տէր Մելկոնեանը խնդրում է մեզ յայտնել, որ նա արդէն թարգմանում է Юлія Гуро-ի «Записки мальчика» կոչված աշխատութիւնը, և ինքը դիտաւորութիւն ունի տպագրել տալու, այնպէս որ ուրիշները ձեռնամուխ չը լինեն մի և նոյն գրքի թարգմանութեանը։